

Արձանագրություն N2

2018 թվականի օգոստոսի 23-ին ժամը 10:00-ին կայացած՝ եկամուտների վարչարարության բարեփոխումների հասարակական խորհրդի նիստի

1. Քննարկվեցին խորհրդի աշխատակարգին վերաբերող հարցերը: Մասնավորապես՝ խորհրդի աշխատանքներն առավել արդյունավետ կազմակերպելու համար որոշվեց եկամուտների վարչարարության բարեփոխումների վերաբերյալ առաջարկները ներկայացնել խորհրդի քարտուղարության կողմից ներկայացված ձևատեսքով: Քննարկվեց նաև խորհրդի նիստերին մասնակցության հարցը, արդյունքում՝ որոշվեց, որ խորհրդի նիստերին կմասնակցեն խորհրդում ընդգրկված կազմակերպությունների կողմից նշված ներկայացուցիչները, իսկ այլ անձանց մասնակցության անհրաժեշտության դեպքերում՝ խորհրդի քարտուղարությանը նախապես կներկայացվեն նրանց տվյալները:

2. Խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց միասնական հաշվում առկա գումարների վերադարձման համար հարկ վճարողի կողմից ներկայացված դիմումում նշված գումարը՝ վերադարձման օրվա դրությամբ միասնական հաշվում առկա գումարից ավելի լինելու դեպքում միասնական հաշվում առկա գումարը հարկ վճարողին չվերադարձնելու հետ կապված խնդիրը:

Նշված հարցի կապակցությամբ ՀՀ ՊԵԿ նախագահի տեղակալ Մ. Փաշայանը հայտնեց, որ ՀՀ հարկային օրենսգրքի 327-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ միասնական հաշվում առկա գումարների վերադարձը կատարվում է դիմումում նշված գումարի չափով, սակայն ոչ ավելի, քան վերադարձման օրվա դրությամբ միասնական հաշվում առկա գումարի չափից: Վերջինս հայտնեց, որ Գանձապետարանի կողմից ներկայացված դիրքորոշման համաձայն՝ նշված դրույթը չի ենթադրում դիմումում նշված գումարից պակաս գումարի չափով վերադարձ՝ մասնակի վերադարձ միասնական հաշվում առկա գումարի չափով, այդ պատճառով էլ միասնական հաշվում առկա գումարը դիմումում նշված գումարից պակաս (նաև 1 դրամ) լինելու դեպքում դիմումին ընթացք չի տրվում: Բարձրացված խնդրի կարգավորման նպատակով պարոն Փաշայանն առաջարկեց օրենսգրքի 327-րդ հոդվածում կատարել համապատասխան փոփոխություն:

3. Ներկայացվեց, որ այն դեպքերում, երբ միասնական հաշվում առկա գումարը՝ միասնական հաշվից գումարների վերադարձման դիմումի ներկայացումից ուշ է հաշվեգրվում, որևէ գումար չի վերադարձվում, չնայած այն հանգամանքին, որ միասնական հաշվից գումարների վերադարձման դիմումի ընթացքը տրվում է օրվա վերջում:

Նշված հարցի վերաբերյալ պարոն Փաշայանը հայտնեց, որ միասնական հաշվից հարկային պարտավորությունների մարումները, միասնական հաշվում առկա գումարների վերադարձը և գերավճարներից միասնական հաշվի համալրումը կատարվում է հետևյալ սխեմայով: Ամեն օր ժամը 00:10-ից կատարվում է նախորդ օրվա դրությամբ պարտավորությունների հաշվարկ, ապա մշակվում են միասնական հաշվի հետ կապված գումարների տեղաշարժերը հետևյալ կերպ՝

- մշակվում և փոխանցվում են գերավճարներից միասնական հաշվի համալրման հայտերը՝ «ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ» Հիմնավորված գումարները միասնական հաշիվ մուտքագրելու» (ya) փաստաթղթի միջոցով,

- հաշվարկվում, մարվում են հարկային պարտավորությունները և Գանձապետարան է ուղարկվում այս մարումների հետ կապված փոխանցումների հանձնարարականները,

- մշակվում և Գանձապետարան են ուղարկվում հարկ վճարողների «ԴԻՄՈՒՄ՝ Միասնական հաշվից գումարները վերադարձնելու» (yb) դիմումները:

Վերոնշյալ սխեմայից տարբերվող դեպքերի համար պարոն Փաշայանը խնդրեց ներկայացնել համապատասխան օրինակներ, որոնք անհատական ուսումնասիրելուց հետո էլ վերջինիս կողմից կներկայացվեն համապատասխան պարզաբանումներ:

4. Ներկայացվեց հարկ վճարողի կողմից ներկայացված՝ միասնական հաշվից գումարների վերադարձման դիմումը չբավարարվելու դեպքում հարկ վճարողին այդ մասին չտեղեկացնելու և վերջինիս կողմից ներկայացված դիմումը ՀՆԷՀ-ից ջնջելու հարցը:

Սույն հարցի կապակցությամբ ՀՀ ՊԵԿ նախագահի տեղակալ Մ. Փաշայանը հայտնեց, որ առաջիկա ծրագրային փոփոխություններով նախատեսվում է հարկ

վճարողներին ծանուցել միասնական հաշվից գումարների վերադարձման դիմումը չբավարարելու պատճառների մասին:

5. Ներկայացվեց, որ հարկային մարմնի կողմից ստուգման ակտերով առաջադրված պարտավորությունները հարկ վճարողների կողմից մարվում են, հարկային հաշվարկներով հայտարարագրված պարտավորությունները մնում են առանց մարման, դրանց նկատմամբ հաշվարկվում են տույժեր՝ անկախ այն հանգամանքից, որ այն ակտը, որով առաջադրվել են լրացուցիչ պարտավորություններ, բողոքարկվել է հարկ վճարողի կողմից: Վերջինիս հետ կապված՝

- հարկ վճարողի մոտ առաջանում են խնդիրներ պետական գնումների մասնակցության ժամանակ,

- եկամտային հարկի հաշվարկով առաջացած պարտավորությունները մարված չլինելու դեպքերում, հարկ վճարողի վարձու աշխատողներին՝ եկամտային հարկի գումարները հիփոթեքային վարկի տոկոսների մարմանն ուղղելու համար, չի տրամադրվում համապատասխան տեղեկանք՝ եկամտային հարկի գծով պարտավորությունների կատարման վերաբերյալ,

- չեն մարվում ԵՏՄ անդամ երկրներից ներմուծված ապրանքների մասով ներմուծման հարկային հայտարարագրերում արտացոլված գումարները և հարկ վճարողը զրկվում է այդ գումարները հաշվանցելու հնարավորությունից:

Նշված հարցի կապակցությամբ պարոն Փաշայանը հայտնեց, որ անձնական հաշվի քարտերում հարկային պարտավորությունները մարվում են օրենսգրքի 325-րդ հոդվածով սահմանված կարգին (հերթականությանը) համապատասխան: Միաժամանակ, բողոքարկված ստուգման ակտերի մասով հայտնեց, որ 21.06.2018թ. ընդունված ՀՕ-338-Ն օրենքով ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ հոդվածում կատարվել է փոփոխություն, որով սահմանվել է, որ հարկային մարմնի իրականացրած հարկային հսկողության արդյունքներով կազմված ստուգման կամ այլ վարչական ակտերով հարկային պարտավորություններ առաջադրված լինելու դեպքում նշված ստուգման կամ այլ վարչական ակտերը դառնում են անբողոքարկելի ուժի մեջ մտնելուց հետո՝ երկամսյա ժամկետում, և դրանցով արձանագրված հարկային պարտավորությունները հարկ վճարողի կողմից ենթակա են կատարման նշված ակտերն անբողոքարկելի դառնալու օրվան հաջորդող 10-

օրյա ժամկետում: Վերջինս նաև տեղեկացրեց, որ մշակվում է համապատասխան ընթացակարգ մինչև 01.07.2018թ.-ը և դրանից հետո ընկած ժամանակաշրջանների համար ստուգման ակտերով առաջադրված հարկային պարտավորությունները փոխելու համար:

6. Ներկայացվեց, որ միասնական հաշվին մուտքագրման ենթակա գումարների հիմնավորվածության ուսումնասիրության արձանագրությամբ հաստատված գումարները արտացոլվում են արձանագրության կազմման ամսաթվից ավելի ուշ (առնվազն 10 օր), որի արդյունքում հնարավոր է, որ պարտավորությունների առկայության դեպքում հաշվարկվեն տույժեր:

Սույն հարցի առնչությամբ պարոն Փաշայանը հայտնեց, որ միասնական հաշվին մուտքագրման ենթակա գումարների հիմնավորվածության ուսումնասիրության արձանագրությունները համակարգ են մուտքագրվում ձեռքով՝ ՊԵԿ համապատասխան աշխատակիցների կողմից և այդ արձանագրությունները՝ դրանք կազմելու նույն օրը համակարգ մուտքագրելը հնարավոր չէ: Արդյունքում, խնդրի կարգավորման նպատակով որոշվեց՝ համակարգ մուտքագրվող արձանագրության մեջ լրացնել վերջինիս կազմման ամսաթիվը և պարտավորությունների հաշվարկման առումով հիմք ընդունել արձանագրության կազմման ամսաթիվը: Միաժամանակ, ՊԵԿ նախագահի առաջին տեղակալ պարոն Մաշադյանը հայտնեց, որ բոլոր այն դեպքերում, երբ միասնական հաշվին մուտքագրման ենթակա գումարների հիմնավորվածության ուսումնասիրության արձանագրությունները համակարգ են մուտքագրվում արձանագրության կազմման ամսաթվից ավելի ուշ, որի հետևանքով հաշվարկվում են տույժեր, հարկ վճարողները՝ տույժերի փոխհատուցման պահանջով կարող են դիմել ՊԵԿ:

7. Ներկայացվեց՝ առնվազն 2018թ. ապրիլի 1-ի դրությամբ ՀՆԷՀ համակարգում հարկ վճարողների հարկային պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվության, ավելացված արժեքի հարկի և դեբետային գումարների, անցումային գերավճարների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ տեղեկատվության բացակայության պատճառով անհարկի տույժերի հաշվարկման հարցը:

Նշված հարցի առնչությամբ ՀՀ ՊԵԿ նախագահի տեղակալ Մ. Փաշայանը հայտնեց, որ պարտավորությունների մարման ալգորիթմը համապատասխանում է

ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված նորմերին և հարկ վճարողը կարող էր պարտավորությունները հաշվարկել ինքնուրույն, կամ դիմել հարկային մարմնի համապատասխան սպասարկման բաժին: Միաժամանակ, վերջինս նաև հայտնեց, որ մինչև ՀՆԷՀ համակարգում «Հարկային պարտավորություններ» էջի վերջնական գործարկումը, այն պիլոտային եղանակով ներդրված է եղել 20 հարկ վճարողների մոտ, որոնց հետ պարբերաբար կատարվել են տվյալների ճշտումներ:

8. Ներկայացվեց հարկ վճարողների կողմից 2017թ. համար ներկայացված շահութահարկի հաշվարկով շահութահարկի պարտավորությունների՝ օրենքից չբխող մարման պատճառով հարկ վճարողների կողմից այլ հարկատեսակների գծով ներկայացված հաշվարկներով արտացոլված պարտավորությունների չմարման հետևանքով տույժերի հաշվարկման հարցը:

Նշված հարցի կապակցությամբ ՀՀ ՊԵԿ նախագահի տեղակալ Ռ. Մաշադյանը հայտնեց, որ ՀՀ հարկային օրենսգրքի 447-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան՝ 2017թ. դեկտեմբերի 31-ով ավարտվող հաշվետու ժամանակաշրջաններին վերաբերող հարկային հաշվարկները օրենսգիրքն ուժի մեջ մտնելուց հետո ներկայացվում են մինչև օրենսգիրքն ուժի մեջ մտնելը գործող օրենսդրությամբ սահմանված վերջնաժամկետներում, հետևաբար՝ բացակայում է նշված՝ շահութահարկի գծով պարտավորությունները օրենսգրքով սահմանված կարգավորումներին համապատասխան չմարվելու փաստը: Սույն հարցի քննարկման շրջանակներում խորհրդի անդամների կողմից առաջարկվեց նաև հարկային պարտավորությունների մարումը կատարել դրանց վճարման վերջնաժամկետով, առաջարկվեց նաև վերադառնալ նախկինում գործող գերավճարների համակարգին: Վերջինիս վերաբերյալ գրավոր դիրքորոշում հայտնելու նպատակով խորհրդի անդամներին առաջարկվեց իրենց առաջարկությունները ներկայացնել գրավոր: